1920թ. ամառը Հայաստանը բաժանուած էր 4 նահանգապետութիւն-ների. 1) Արարատեան՝ նահանգապետ ներքին գործոց նախարարի օգնական Ս. Թորոսեան, օգնական՝ Լ. Ամիրխանեան, 2) Շիրակի՝ նահանգապետ Կ. Սասունի, 3) Վանանդի՝ Ստ. Ղորղանեան, 4) Սիւնեաց՝ Ս. Մելիք-Եօլչեան, իսկ նրա հրաժարականից յետոյ՝ Զ. Եօլեան: Նահանգները իրենց հերթին, բաժանւում էին գաւառների: Վարչութիւնը կազմակերպւած, հետզհետէ բարելաււում ու կատարելագործւում էր, թէև մայիսեան շարժումներն ու թրքական չրջանների դէպքերը մեծապէս դժւարացնում էին կեանքի և պետական մեքենայի կարգաւորումը:

Այս դէպքերը խորապէս անդրադառնում էին և գաւառական ինքնա-վարութիւնների գործունէութեան, բայց, մանաւանդ, երկրի ելևմտական վիճակի վրա:

Ճիշտ է, Զանգիբասարի և Շարուրի գրաւումը մեծարժէք հարստու-թիւններ տւեց կառավարութեան ձեռքը: Այսպէս, Շարուրի գրաւումից անմիջապէս յետոյ գիւղատնտեսական նախարարութեան վիճակագրական բաժինը այնտեղ ուղարկեց վիճակագիրներ՝ Բ. Իշխանեանի անձնական հսկողութեան տակ: Եւ թէև հաւաքւած տեղեկութիւնները լրիւ չէին, բայց ստացւած թւերը հարստութեան մեծ պաշար էին ցոյց տալիս:

Շարուրում կար 70 գիւղ, որոնցից 6 հայկական և 1 ասորական. մնացեալը՝ թուրք: Բնակիչների թիւը հաւասար էր 90 հազարի, որից հայերը, բացառութեամբ 30 ընտանիքի, սրի էին քաշւած դեռ 1919-ի նահանջի ժամանակ:

1919թ. աշնանը և 20-ի գարնանը Շարուրում ցանւել էր 300,000 փութ ցորեն, 150,000փ. գարի, 50,000փ. չալթուկ (բրինձ), 4000փ. վարսակ, 1000փ. եգիպտացորեն, 500փ. կորեկ, 1000փ. սիսեռ, 1000փ. սեխ ու ձմերուկ, 200փ. լոբի, 200փ. սոխ, 20փ. ոսպ, 7փ. ծխախոտ — ընդամենը՝ 507,927 փութ սերմացու:

Բերքը եղել է չափից աւելի առատ և մօտաւոր հաշւով սեխ ու ձմերուկ 10,000,000 փութ. ցորեն 3,500,000փ., գարի 1,500,000փ., կորեկ 20,000 փութ, վարսակ 20,000փ., եգիպտացորեն 25,000փ., սոխ 50,000փ., սիսեռ 25,000փ., լոբի 10,000փ., ոսպ 1,000փ., ծխախոտ 2,000փ., ընդամենը 15,153,000 փութ: Այս թւի վրա պէտք էր աւելացնել և չալթուկի բերքը, որ հաւաքւած չլինելու պատճառով կարելի չէր չափորոշել, բայց որի քանակը շատ խոշոր էր: Պէտք էր աւելացնել և 500,000փ. տանձ, 80,000փ. խնձոր, 60,000փ. դեղձ, 25,000փ. սալոր և այլն:

Նման առատութիւն էր տիրում և Զանգիբասարում, ուր միայն բրնձի քանակը հաշււում էր մօտ 400,000 փութ:

Բայց այս հարստութեան մեծ մասը չմտաւ պետութեան պահեստները, այլ, զանազան ձևերով, անցաւ ժողովրդի ձեռքը, մասամբ դարձաւ չարա-շահութեան նիւթ կամ փչացաւ: Կառավարութիւնը աշխատեց կազմակերպել լքւած հարստութիւնների օգտագործումը, գործի կանչեց հմուտ ու բարե-